# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2005Թ.-Ի ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2005Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑՅԱՅԻ ԿՈՂՄԻՑ

ք. Երևան
2006թ. փետրվարի 15

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. ՆԱԽԱԲԱՆ ..... 3
II. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ ..... 3
III. ՆԱԽՈՐԴ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ..... 4
IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՈԼՈՐՏՆԵՐԸ ..... 5
V. ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ ..... 8

# I. ՆԱԽԱԲԱՆ

2006թ.-ի փետրվարի 11-ին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպվեց և անցկացվեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (այսուհետև` ՀԵԻԱ) գործունեության 2005թ.-ի հունվար ամսից մինչև 2005թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի ինքնագնահատման սեմինար:
Ինքնագնահատման սեմինարին մասնակցեցին ՀԵԻԱ-ի 17 ակտիվիստներ` կազմակերպության կենտրոնական և 5 մարզային կառույցներից (Սյունիքի (Կապան և Գորիս քաղաքների գրասենյակներ), Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի), որոնց թվում`

- ՀԵԻԱ վարչության 3 անդամներ (ընդհանուր թվի13,6 %-ը)
- առանձնացված ստորաբաժանումների 5 ղեկավարներ (ընդհանուր թվի 22,7 %-ը)
- աշխատակազմի 12 հիմնական անդամներ, որոնցից 10-ը միաժամանակ հանդիսանում են ՀԵԻԱ լիիրավ անդամներ (ընդհանուր թվի 54,5 %-ը )
- 14 լիիրավ անդամներ, որոնցից 4-ը միաժամանակ հանդիսանում են ՀԵԻԱ աշխատակազմի հիմնական անդամներ, 3-ը վարչության անդամներ (որոնցից 1-ը միաժամանակ հանդիսանում է առանձնացված ստորաբաժանման ղեկավար), 4-ը` առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ (ընդհանուր թվի 63,6%-ը )
- 4 համակիր անդամներ (ընդհանուր թվի 18,18 %-ը)
- 2 գործընկեր հասարակական կազմակերպություններ (ընդհանուր թվի 9,09%-ը ):

Ինքնագնահատման սեմինարի նպատակներն էին`

- ծանոթանալ կազմակերպության ինքնագնահատման գործընթացին,
- ամփոփել 2005թ.-ի հունվարին մշակված կազմակերպության զարգացման մեկամյա պլանի իրականացման արդյունքները,
- գնահատել նախորդ ինքնագնահատման և զարգացման պլանի մշակման գործընթացի արդյունավետությունը,
- գնահատել կազմակերպությունը տվյալ պահի դրությամբ,
- 2006թ.-ի համար մշակել ՀԵԻԱ զարգացման նոր պլան,
- պլանավորել հաջորդ ինքնագնահատումը:

Ինքնագնահատման սեմինարի արդյունքներն են հանդիսանում տվյալ հաշվետվությունը, կից ներկայացված ՀԵԻԱ զարգացման մեկ տարվա պլանը և հարցաթերթիկների վերլուծության արդյունքները:

# II. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

ՀԵԻԱ ինքնագնահատման գործընթացը իրականացվեց ինտերակտիվ սեմինարի ձևով, որի ընթացքում կիրառվեցին ներկայացումներ, «ուղեղի գրոհ», հարցաթերթիկների լրացում, քննարկումներ, գործնական աշխատանքներ` փոքր խմբերում: Սեմինարը անցկացվեց մեկ օր անընդմեջ` ընդհանուր առմամբ 8 ժամ 15 րոպե տևողությամբ:
ՀԵԻԱ ինքնագնահատման գործընթացը բաղկացած էր հետևյալ հիմնական փուլերից.

1. կազմակերպության կայունության, գնահատման և ինքնագնահատման գաղափարների ներկայացում, ինքնագնահատման գործիքի ներկայացում մասնակիցներին (փուլերը, նպատակները, օգուտները և մեթոդոլոգիան),
2. կազմակերպության նախորդ գնահատումից հետո գրանցված առաջընթացի ներկայացում,
3. կազմակերպության ինքնագնահատում, հարցաթերթիկների լրացում, կազմակերպության ինքնագնահատում մասնակիցների կողմից,
4. հարցաթերթիկների վերլուծություն և քննարկում,
5. առաջիկա մեկ տարվա համար կազմակերպության զարգացման պլանի մշակում:

ՀԵԻԱ-ի ինքնագնահատման գործընթացը կազմակերպվեց և իրականացվեց Լիանա Հարությունյանի, Ռոբերտ Գրիգորյանի, Մերի Եգանյանի և Միհրան Գալստյանի կողմից: ՀԵԻԱ-ի ինքնագնահատում իրականացնողները իրար մեջ կիսեցին հետևյալ պարտականությունները.

1. Գործընթացի մեթոդների դիտարկում, ուսումնասիրություն և վերլուծություն,
2. Մասնկացություն նախապատրաստական և կազմակերպչական հարցերին, մասնավորապես.
   - ❖ դահլիճի նախապատրաստում,
   - ❖ ֆլիպ չարթերի նախապատրաստում,
3. նախորդ գնահատումից հետո ընկած ժամանակահատվածում արձանագրված առաջընթացի ներկայացում,
4. քննարկման արդյունքների գրանցում ֆլիպ չարթ թղթերի վրա,
5. քննարկումների ժամանակ հնչած կարևոր տեղեկությունների ու կարծիքների գրանցում` հաշվետվության մեջ ներառելու նպատակով,
6. նյութերի բաժանում մասնակիցներին,
7. հարցաթերթիկների ամփոփում,

8. լուսանկարում,
9. ՀԵԻԱ-ի զարգացման պլանի մուտքագրում համակարգիչ,
10. ինքնագնահատման գործընթացի և արդյունքների վերաբերյալ հաշվետվության պատրաստում,
11. կատարված աշխատանքի վերլուծությանը նվիրված հանդիպում ՀԵԻԱ-ի ինքնագնահատման վարողների հետ:

## III. ՆԱԽՈՐԴ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

Ներքևում ներկայացված է ՀԵԻԱ-ի նախորդ ինքնագնահատման արդյունքում ընտրված և զարգացման պլանում հաստատված ոլորտների առաջընթացը:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

| ԿԱՐԻՔ | ԱՌԱՋԸՆԹԱՑ |
|---|---|
| **1.ՀԵԻԱ ֆինանսական կայունության ապահովման անհրաժեշտություն, նոր ֆինանսական աղբյուրների հայտնաբերում և ազատ ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում.**<br>• Արտաքին և ներքին նոր ֆինանսական աղբյուրների հայտնաբերում,<br>• Ազատ ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում | 2005թ.-ի ընթացում ՀԵԻԱ-ն շարունակել է իրականացնել նախորդ տարիներին սկսված 2 ծրագրեր, տարբեր միջազգային կազմակերպությունների են ներկայացվել 6 դրամաշնորհային առաջարկներ, որոնցից 5-ը ստացել են ֆինանսավորում և այժմ իրականացվում են ՀԵԻԱ-ի գրասենյակների կողմից: Ծրագրերից 1-ի ֆինանսավորման հարցը այժմ քննարկման փուլում է: 2005թ.-ին մերժվել է 2004-ին տրված 1 դրամաշնորհային առաջարկ:<br><br>ՀԵԻԱ վարչության և անդամների հետ խորհրդակցության արդյունքում որոշում է կայացվել ՀԵԻԱ ազատ դրամական միջոցները օգտագործել ՀԵԻԱ գրասենյակային տարածքի շինարարության ծախսերի մի մասը փակելու ուղղությամբ: |
| **2. ՀԵԻԱ բիզնես կառույցի զարգացման անհրաժեշտություն.** | «Նոր իրավաբանական խումբ» ՍՊԸ-ն 2005թ.-ին վերագրանցվել է «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» անվամբ: Ընկերությունը ձեռք է բերել մասնակիցներ, փոխել է ընկերության դեմքը և ներկայումս ակտիվ աշխատանքներ է տանում նոր հաճախորդներ ձեռք բերելու հարցում: |

2.ԾՐԱԳՐԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԿԱՐԻՔ | ԱՌԱՋԸՆԹԱՑ |
|---|---|
| **1.Մատուցվող ծրագրերի և ծառայությունների արդյունավետության որոշում:** | Մատուցված ծառայության որակի գնահատման չափանիշների մշակման գործընթացը գտնվում է նախագծի փուլում: Չափանիշների մշակումն ու գործարկումը կավարտվի հաջորդ տարի:<br><br>Իրավաբանական օգնության հաշվառման թերթիկները վերանայվել են ՀԵԻԱ-ի իրավաբան- խորհրդատուների կողմից և բարեփոխվել տեխնիկական և բովանդակային առումներով: Հաշվառման թերթիկների նոր տարբերակներում ավելացվել է «կազմակերպության մասին իրազեկման աղբյուրը» բաժինը և գործածության մեջ դրվել 2005թ. օգոստոսի 1-ից:<br>Ընտրվել են 36 շահառուներ, որոնց համար ՀԵԻԱ իրավաբան-խորհրդատուների կողմից ձեռնարկվել են որոշակի գործողություններ՝ գրավոր փաստաթղթերի կազմում, դատական ներկայացուցչություն և այլն: Հեռախոսազանգերի միջոցով պարզվել են տրված խորհրդատվության արդյունքները: 36 շահառուներից 14-ի գործերը ստացել են դրական լուծում: ՀԵԻԱ իրավաբանների մասնակցությամբ իրականացված 14 դատական գործերից 11-ը լուծվել են հաճախորդի օգտին, 2-ը ընթացքի մեջ են: |
| **2.ՀԵԻԱ ծառայությունների առավելագույն համապատասխանեցում շահառու խմբերի կարիքներին** | Շահառու խմբերից ՀԵԻԱ մասնագիտական հանձնաժողովների կարիքի գնահատման նպատակով կազմվել է ֆոկուս խմբի մասնակիցների ցուցակ, ինչպես նաև խմբին տրվող հարցերը: Առաջիկայում կսկսվեն ավելի նպատակաուղղված գործողությունների ձեռնարկումը այս ուղղությամբ: |

## IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՈԼՈՐՏՆԵՐԸ

ՅԵԻԱ ինքնագնահատման սեմինարի ընթացքում մասնակիցների կողմից լրացված ինքնագնահատման հարցաթերթիկների ամփոփման արդյունքում ստացվեց հետևյալ պատկերը.

- Յարաբերություններ այլ կազմակերպությունների հետ – 17,00
- Ղեկավարում – 15,57
- Կառավարում – 14,13
- Ֆինանսական կայունություն – 14,09
- Ծրագրեր և ծառայություններ – 13,91
- Մարդկային ռեսուրսներ –12,35




Սեմինարի մասնակիցների համատեղ որոշմամբ ընտրվեցին ուշադրության առավել կարիք ունեցող հետևյալ երկու ոլորտները՝

- Ծրագրեր և ծառայություններ
- Մարդկային ռեսուրսներ

| | |
|---|---|
| I | Յարաբեր. այլ կազմակերպ. հետ |
| II | Ղեկավարում |
| III | Կառավարում |
| IV | Ֆինանսական կայունություն |
| V | Ծրագրեր և ծառայություններ |
| VI | Մարդկային ռեսուրսներ |

### 1.ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նախորդ ինքնագնահատաման ժամանակ, այս անգամ ևս ՅԵԻԱ-ի գործունեության այս ոլորտը գնահատվել է որպես առավել ուշադրության կարիք ունեցող ոլորտ: Սեմինարի ընթացքում մասնակիցները ծանոթացան 2005թ.-ի հունվար ամսից մինչև 2005թ.-ի դեկտեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածում այս ոլորտում ինչպես իրականացված, այնպես էլ անավարտ մնացած աշխատանքներին, մասնավորապես՝

- Մատուցվող ծրագրերի և ծառայությունների արդյունավետության որոշման կապակցությամբ ներկաներին ներկայացվեց իրավաբանական օգնության հաշվառման թերթիկի նոր տարբերակի բովանդակությունը, որում ավելացվել էր «կազմակերպության մասին իրազեկման աղբյուրը» բաժինը, բացի այդ նշվեց նաև, որ մատուցված ծառայության որակի գնահատման չափանիշների մշակման գործընթացն ավարտված չէ և գտնվում է մշակման փուլում:
- ՅԵԻԱ-ի ծառայությունների առավելագույն համապատասխանեցում շահառու խմբերի կարիքներին: Այս խնդրի կապակցությամբ, որպես իրականացված աշխատանք՝ նշվեց ՅԵԻԱ-ի հինգ մասնագիտական հանձնաժողովների անդամներից կազմված ֆոկուս խմբի մասնակիցների ցուցակի ձևավորումը և այդ խմբերին տրվող հարցերի ցանկի կազմումը, իսկ մասնագիտացված հանձնաժողովների անդամների կարիքները պարզելու ուղղությամբ աշխատանքները ավարտին հասցնելը կշարունակվի հաջորդ տարում:

Քննարկման արդյունքում մասնակիցների մեծամասնությունը համաձայնեց, որ ՅԵԻԱ-ն շահակիցների և շահառուների շրջանում բարձր հեղինակություն վայելող կազմակերպություն է, ունի մասնագիտական հեղինակություն, որի արդյունքում այլ կազմակերպությունները հաճույքով համագործակցում են ՅԵԻԱ-ի հետ՝ նաև դիմելով կազմակերպությանը՝ գործունեության տվյալ ոլորտում փորձագիտական կարծիք ստանալու համար:

Միաժամանակ ներկաները համաձայնեցին այն հանգամանքի հետ, որ ՅԵԻԱ-ի կողմից իրականցվող ծրագրերը և մատուցվող ծառայությունները մշակվում են՝ ելնելով կազմակերպության առաքելությունից և շահառու խմբերի առաջնահերթ կարիքներից: Չնայած վերը նշված առաջընթացին և բացթողումներին՝ ընդհանուր քննարկման արդյունքում սեմինարի մասնակիցները վստահորեն նշեցին որոշ առաջարկություններ մատուցվող ծառայությունների արդյունավետության և որակական կողմը ապահովելու համար, օրինակ՝

- ծրագրի գնահատման լավ մշակված համակարգի ստեղծում,
- ծառայությունների մատուցման որակի ստանդարտների մշակում,

- տեղեկատվության և մարկետինգի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմների ներդրում և կիրառում:




## 2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ինքնագնահատման հարցաթերթիկների ամփոփման արդյունքում այս ոլորտը մասնակիցների կողմից նույնպես արժանացել էր ուշադրության՝ որպես առավել զարգացման կարիք ունեցող ոլորտ: Բոլոր մասնակիցները միաձայն կարևորեցին «մարդկային ռեսուրսներ» ոլորտի զարգացումը՝ որպես ՀԵԻԱ-ի կայունության հիմք: Այս ուղղությամբ քննարկման ընթացքում ներկաները առաջ քաշեցին հետևյալ առաջարկները՝

- ՀԵԻԱ-ի աշխատակիցների և կամավորների խրախուսման միջոցների ներդրում և կիրառում,
- աշխատանքի գնահատման թերթիկի մշակում և ներդրում,
- աշխատակազմի վերապատրաստման, որակավորման բարձրացման մեխանիզմների մշակում,
- որոշակի պարբերականությամբ ոչ ֆորմալ հավաքույթների կազմակերպում աշխատակազմի և շահակիցների ներգրավմամբ:




## 3. ՀԵԻԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Ինքնագնահատման հարցաթերթիկների վերլուծության ընթացքում պարզվեց, որ հարցաթերթիկներում ներառված հարցերի 9,17%-ին ինքնագնահատման մասնակիցները տեղյակ չէին: Ներքևում բերվում են ինքնագնահատման հարցաթերթիկներում տեղ գտած այն ոլորտները և առանձին ուղղությունները, որոնց մասին սեմինարի մասնակիցները ունեին լրացուցիչ տեղեկությունների կարիք:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսավորման աղբյուրները

- Կազմակերպությունը ունի ֆինանսավորման առնվազն 5 աղբյուրներ և դրանցից ոչ մեկի ներդրումը չի գերազանցում կազմակերպության ընդհանուր բյուջեի 40%-ը:
- Կազմակերպությունը ունի ծախքերի հատուցման մեխանիզմներ

ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Վարչության/Ղեկավարման կառուցվածքը

- Վարչության նիստերը տեղի են ունենում կանոնավոր կերպով: Նիստերի օրակարգերը և նիստերին վերաբերող նյութերը տարածվում են նախապես, գործում են քվեարկության ընթացակարգեր և կազմվում են նիստերի գրավոր արձանագրություններ:

ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեկտորային փորձաքննություն

- Շահառու խմբերի և շահակիցների լայն շրջաններ դիմում են կազմակերպությանը գործունեության տվյալ ոլորտում փորձագիտական կարծիք ստանալու համար:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Աշխատանքի ծավալի կառավարումը և թիմի ձևավորումը

- Կանոնավոր կերպով անց են կացվում աշխատակազմի ժողովներ:

Աշխատանքի ծավալի կառավարումը և թիմի ձևավորումը

- Աշխատանքային առաջադրանքները աշխատակիցների միջև բաժանվում են ըստ նրանց որակավորման և կատարված աշխատանքի ծավալի:

Աշխատանքային վեճերի կարգավորումը

- Աշխատանքային վեճերի և բախումների կարգավորման արարողակարգերը օգտագործվում են, երբ դրա կարիքը կա:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարդկային ռեսուրսների կառավարումը

- Կազմակերպությունը ունի գրավոր ձևակերպված կադրային քաղաքականություն և արարողակարգեր (հավաքագրում և վարձում, աշխատանքի որակի գնահատում, կարգապահական միջոցառումներ):
- Կազմակերպության բոլոր աշխատակիցների աշխատանքի որակի գնահատումը հանդիսանում է ստանդարտացված, սովորական արարողակարգ:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Համայնքային հարաբերությունները

- Կազմակերպությունը լայնորեն ճանաչված է համայնքի կողմից և ընկալվում է՝ որպես ակտիվորեն համայնքի գործերով զբաղվող և համայնքի խնդիրների շատ արագ արձագանքող կազմակերպություն:




I Ֆինանսական կայունություն
II Ղեկավարում
III Ծրագրեր և ծառայություններ
IV Մարդկային ռեսուրսներ
V Կառավարում
VI Հանրային հարաբերություններ

## V. ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Տվյալ հաշվետվությունը կտեղադրվի ՀԵԻԱ-ի վեբ կայքում և մատչելի կլինի կազմակերպության բոլոր անդամների համար:
ՀԵԻԱ-ի ինքնագնահատման մասնակիցները համաձայնեցին, որ սեմինարի ժամանակ ձևավորված աշխատանքային խմբերը կշարունակեն իրենց հետագա համատեղ աշխատանքը կազմակերպության զարգացման պլանի հստակեցման, կատարելագործման և անհրաժեշտության դեպքում ընդլայնման ուղղությամբ, կսահմանեն հանդիպումների պարբերականություն և կկատարեն դերերի և պարտականությունների վերջնական բաշխում:
Աշխատանքային խմբերի աշխատանքները կկոորդինացվեն և կվերահսկվեն աշխատանքային խմբերի ղեկավարների և կազմակերպության նախագահի կողմից:

### ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ռոբերտ Գրիգորյան- խմբի կոորդինատոր/համակարգող

1. Կարեն Զադոյան
2. Արտակ Սարիբեկյան
3. Մերի Եգանյան
4. Լյուդվիգ Դավթյան
5. Գայանե Մարուքյան
6. Գոռ Հովհաննիսյան

### ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լիանա Հարությունյան- խմբի կոորդինատոր/համակարգող

1. Միհրան Գալստյան
2. Էդուարդ Մանուկյան
3. Հեղինե Դանիելյան
4. Արփինե Եղիկյան
5. Արմինե Ավետիսյան
6. Հարություն Խառատյան

# REPORT ON SELF-ASSESSMENT OF THE ARMENIAN YOUNG LAWYERS ASSOCIATION'S ACTIVITIES FOR THE PERIOD OF JANUARY-DECEMBER 2005

PREPARED BY
THE
ARMENIAN YOUNG LAWYERS ASSOCIATION

YEREVAN
15 FEBRUARY 2006

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

I. ՆԱԽԱԲԱՆ ........................................................................................................................................ 3
II. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ ........................................................................................................................................ 3
III. ՆԱԽՈՐԴ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ............................................................ 4
IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՈԼՈՐՏՆԵՐԸ ........................................................................ 5
V. ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ ........................................................................................................................................ 8

## I. ՆԱԽԱԲԱՆ

2006թ.-ի փետրվարի 11-ին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպվեց և անցկացվեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (այսուհետև՝ ՀԵԻԱ) գործունեության 2005թ.-ի հունվար ամսից մինչև 2005թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի ինքնագնահատման սեմինար:
Ինքնագնահատման սեմինարին մասնակցեցին ՀԵԻԱ-ի 17 ակտիվիստներ՝ կազմակերպության կենտրոնական և 5 մարզային կառույցներից (Սյունիքի (Կապան և Գորիս քաղաքների գրասենյակներ), Շիրակի, Լոռու, Տավուշի), որոնց թվում՝

- ՀԵԻԱ վարչության 3 անդամներ (ընդհանուր թվի13,6 %-ը)
- առանձնացված ստորաբաժանումների 5 ղեկավարներ (ընդհանուր թվի 22,7 %-ը)
- աշխատակազմի 12 հիմնական անդամներ, որոնցից 10-ը միաժամանակ հանդիսանում են ՀԵԻԱ լիիրավ անդամներ (ընդհանուր թվի 54,5 %-ը )
- 14 լիիրավ անդամներ, որոնցից 4-ը միաժամանակ հանդիսանում են ՀԵԻԱ աշխատակազմի հիմնական անդամներ, 3-ը վարչության անդամներ (որոնցից 1-ը միաժամանակ հանդիսանում է առանձնացված ստորաբաժանման ղեկավար), 4-ը՝ առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ (ընդհանուր թվի 63,6%-ը )
- 4 համակիր անդամներ (ընդհանուր թվի 18,18 %-ը)
- 2 գործընկեր հասարակական կազմակերպություններ (ընդհանուր թվի 9,09%-ը ):

Ինքնագնահատման սեմինարի նպատակներն էին՝

- ծանոթանալ կազմակերպության ինքնագնահատման գործընթացին,
- ամփոփել 2005թ.-ի հունվարին մշակված կազմակերպության զարգացման մեկամյա պլանի իրականացման արդյունքները,
- գնահատել նախորդ ինքնագնահատման և զարգացման պլանի մշակման գործընթացի արդյունավետությունը,
- գնահատել կազմակերպությունը տվյալ պահի դրությամբ,
- 2006թ.-ի համար մշակել ՀԵԻԱ զարգացման նոր պլան,
- պլանավորել հաջորդ ինքնագնահատումը:

Ինքնագնահատման սեմինարի արդյունքներն են հանդիսանում տվյալ հաշվետվությունը, կից ներկայացված ՀԵԻԱ զարգացման մեկ տարվա պլանը և հարցաթերթիկների վերլուծության արդյունքները:

## II. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

ՀԵԻԱ ինքնագնահատման գործընթացը իրականացվեց ինտերակտիվ սեմինարի ձևով, որի ընթացքում կիրառվեցին ներկայացումներ, «ուղեղի գրոհ», հարցաթերթիկների լրացում, քննարկումներ, գործնական աշխատանքներ՝ փոքր խմբերում: Սեմինարը անցկացվեց մեկ օր անընդմեջ՝ ընդհանուր առմամբ 8 ժամ 15 րոպե տևողությամբ:
ՀԵԻԱ ինքնագնահատման գործընթացը բաղկացած էր հետևյալ հիմնական փուլերից.

6. կազմակերպության կայունության, գնահատման և ինքնագնահատման գաղափարների ներկայացում, ինքնագնահատման գործիքի ներկայացում մասնակիցներին (փուլերը, նպատակները, օգուտները և մեթոդոլոգիան),
7. կազմակերպության նախորդ գնահատումից հետո գրանցված առաջընթացի ներկայացում,
8. կազմակերպության ինքնագնահատում, հարցաթերթիկների լրացում, կազմակերպության ինքնագնահատում մասնակիցների կողմից,
9. հարցաթերթիկների վերլուծություն և քննարկում,
10. առաջիկա մեկ տարվա համար կազմակերպության զարգացման պլանի մշակում:

ՀԵԻԱ-ի ինքնագնահատման գործընթացը կազմակերպվեց և իրականացվեց Լիանա Հարությունյանի, Ռոբերտ Գրիգորյանի, Մերի Եգանյանի և Միհրան Գալստյանի կողմից: ՀԵԻԱ-ի ինքնագնահատում իրականացնողները իրար մեջ կիսեցին հետևյալ պարտականությունները.

12. Գործընթացի մեթոդների դիտարկում, ուսումնասիրություն և վերլուծություն,
13. Մասնակցություն նախապատրաստական և կազմակերպչական հարցերին, մասնավորապես.
    - ❖ դահլիճի նախապատրաստում,
    - ❖ ֆլիպ չարթերի նախապատրաստում,
14. նախորդ գնահատումից հետո ընկած ժամանակահատվածում արձանագրված առաջընթացի ներկայացում,
15. քննարկման արդյունքների գրանցում ֆլիպ չարթ թղթերի վրա,
16. քննարկումների ժամանակ հնչած կարևոր տեղեկությունների ու կարծիքների գրանցում՝ հաշվետվության մեջ ներառելու նպատակով,
17. նյութերի բաժանում մասնակիցներին,
18. հարցաթերթիկների ամփոփում,

19. լուսանկարում,
20. ՀԵԻԱ-ի զարգացման պլանի մուտքագրում համակարգիչ,
21. ինքնագնահատման գործընթացի և արդյունքների վերաբերյալ հաշվետվության պատրաստում,
22. կատարված աշխատանքի վերլուծությանը նվիրված հանդիպում ՀԵԻԱ-ի ինքնագնահատման վարողների հետ:

## III. ՆԱԽՈՐԴ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

Ներքևում ներկայացված է ՀԵԻԱ-ի նախորդ ինքնագնահատման արդյունքում ընտրված և զարգացման պլանում հաստատված ոլորտների առաջընթացը:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

| ԿԱՐԻՔ | ԱՌԱՋԸՆԹԱՑ |
|---|---|
| **1.ՀԵԻԱ ֆինանսական կայունության ապահովման անհրաժեշտություն, նոր ֆինանսական աղբյուրների հայտնաբերում և ազատ ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում.**<br>• Արտաքին և ներքին նոր ֆինանսական աղբյուրների հայտնաբերում,<br>• Ազատ ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում | 2005թ.-ի ընթացում ՀԵԻԱ-ն շարունակել է իրականացնել նախորդ տարիներին սկսված 2 ծրագրեր, տարբեր միջազգային կազմակերպությունների են ներկայացվել 6 դրամաշնորհային առաջարկներ, որոնցից 5-ը ստացել են ֆինանսավորում և այժմ իրականացվում են ՀԵԻԱ-ի գրասենյակների կողմից: Ծրագրերից 1-ի ֆինանսավորման հարցը այժմ քննարկման փուլում է: 2005թ.-ին մերժվել է 2004-ին տրված 1 դրամաշնորհային առաջարկ:<br><br>ՀԵԻԱ վարչության և անդամների հետ խորհրդակցության արդյունքում որոշում է կայացվել ՀԵԻԱ ազատ դրամական միջոցները օգտագործել ՀԵԻԱ գրասենյակային տարածքի շինարարության ծախսերի մի մասը փակելու ուղղությամբ: |
| **2. ՀԵԻԱ բիզնես կառույցի զարգացման անհրաժեշտություն.** | «Նոր իրավաբանական խումբ» ՍՊԸ-ն 2005թ.-ին վերագրանցվել է «ԼԻԳԼ ԸԼԱՅՆՍ» անվամբ: Ընկերությունը ձեռք է բերել մասնակիցներ, փոխել է ընկերության դեմքը և ներկայումս ակտիվ աշխատանքներ է տանում նոր հաճախորդներ ձեռք բերելու հարցում: |

2.ԾՐԱԳՐԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԿԱՐԻՔ | ԱՌԱՋԸՆԹԱՑ |
|---|---|
| **1.Մատուցվող ծրագրերի և ծառայությունների արդյունավետության որոշում:** | Մատուցված ծառայության որակի գնահատման չափանիշների մշակման գործընթացը գտնվում է նախագծի փուլում: Չափանիշների մշակումն ու գործարկումը կավարտվի հաջորդ տարի:<br><br>Իրավաբանական օգնության հաշվառման թերթիկները վերանայվել են ՀԵԻԱ-ի իրավաբան- խորհրդատուների կողմից և բարեփոխվել տեխնիկական և բովանդակային առումներով: Հաշվառման թերթիկների նոր տարբերակներում ավելացվել է «կազմակերպության մասին իրազեկման աղբյուրը» բաժինը և գործածության մեջ դրվել 2005թ. օգոստոսի 1-ից:<br>Ընտրվել են 36 շահառուներ, որոնց համար ՀԵԻԱ իրավաբան-խորհրդատուների կողմից ձեռնարկվել են որոշակի գործողություններ՝ գրավոր փաստաթղթերի կազմում, դատական ներկայացուցչություն և այլն: Հեռախոսազանգերի միջոցով պարզվել են տրված խորհրդատվության արդյունքները: 36 շահառուներից 14-ի գործերը ստացել են դրական լուծում: ՀԵԻԱ իրավաբանների մասնակցությամբ իրականացված 14 դատական գործերից 11-ը լուծվել են հաճախորդի օգտին, 2-ը ընթացքի մեջ են: |
| **2.ՀԵԻԱ ծառայությունների առավելագույն համապատասխանեցում շահառու խմբերի կարիքներին** | Շահառու խմբերից ՀԵԻԱ մասնագիտական հանձնաժողովների կարիքի գնահատման նպատակով կազմվել է ֆոկուս խմբի մասնակիցների ցուցակ, ինչպես նաև խմբին տրվող հարցերը: Առաջիկայում կսկսվեն ավելի նպատակաուղղված գործողությունների ձեռնարկումը այս ուղղությամբ: |

## IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՈԼՈՐՏՆԵՐԸ

ՅԵԻԱ ինքնագնահատման սեմինարի ընթացքում մասնակիցների կողմից լրացված ինքնագնահատման հարցաթերթիկների ամփոփման արդյունքում ստացվեց հետևյալ պատկերը.

- Յարաբերություններ այլ կազմակերպությունների հետ – 17,00
- Ղեկավարում – 15,57
- Կառավարում – 14,13
- Ֆինանսական կայունություն – 14,09
- Ծրագրեր և ծառայություններ – 13,91
- Մարդկային ռեսուրսներ –12,35




Սեմինարի մասնակիցների համատեղ որոշմամբ ընտրվեցին ուշադրության առավել կարիք ունեցող հետևյալ երկու ոլորտները`

- Ծրագրեր և ծառայություններ
- Մարդկային ռեսուրսներ

I Յարաբեր. այլ կազմակերպ. հետ
II Ղեկավարում
III Կառավարում
IV Ֆինանսական կայունություն
V Ծրագրեր և ծառայություններ
VI Մարդկային ռեսուրսներ

### 1.ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նախորդ ինքնագնահատաման ժամանակ, այս անգամ ևս ՅԵԻԱ-ի գործունեության այս ոլորտը գնահատվել է որպես առավել ուշադրության կարիք ունեցող ոլորտ: Սեմինարի ընթացքում մասնակիցները ծանոթացան 2005թ.-ի հունվար ամսից մինչև 2005թ.-ի դեկտեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածում այս ոլորտում ինչպես իրականացված, այնպես էլ անավարտ մնացած աշխատանքներին, մասնավորապես`

- Մատուցվող ծրագրերի և ծառայությունների արդյունավետության որոշման կապակցությամբ ներկաներին ներկայացվեց իրավաբանական օգնության հաշվառման թերթիկի նոր տարբերակի բովանդակությունը, որում ավելացվել էր «կազմակերպության մասին իրազեկման աղբյուրը» բաժինը, բացի այդ նշվեց նաև, որ մատուցված ծառայության որակի գնահատման չափանիշների մշակման գործընթացն ավարտված չէ և գտնվում է մշակման փուլում:
- ՅԵԻԱ-ի ծառայությունների առավելագույն համապատասխանեցում շահառու խմբերի կարիքներին: Այս խնդրի կապակցությամբ, որպես իրականացված աշխատանք` նշվեց ՅԵԻԱ-ի հինգ մասնագիտական հանձնաժողովների անդամներից կազմված ֆոկուս խմբի մասնակիցների ցուցակի ձևավորումը և այդ խմբերին տրվող հարցերի ցանկի կազմումը, իսկ մասնագիտացված հանձնաժողովների անդամների կարիքները պարզելու ուղղությամբ աշխատանքները ավարտին հասցնելը կշարունակվի հաջորդ տարում:

Քննարկման արդյունքում մասնակիցների մեծամասնությունը համաձայնեց, որ ՅԵԻԱ-ն շահակիցների և շահառուների շրջանում բարձր հեղինակություն վայելող կազմակերպություն է, ունի մասնագիտական հեղինակություն, որի արդյունքում այլ կազմակերպությունները հաճույքով համագործակցում են ՅԵԻԱ-ի հետ` նաև դիմելով կազմակերպությանը` գործունեության տվյալ ոլորտում փորձագիտական կարծիք ստանալու համար:

Միաժամանակ ներկաները համաձայնեցին այն հանգամանքի հետ, որ ՅԵԻԱ-ի կողմից իրականցվող ծրագրերը և մատուցվող ծառայությունները մշակվում են` ելնելով կազմակերպության առաքելությունից և շահառու խմբերի առաջնահերթ կարիքներից: Չնայած վերը նշված առաջընթացին և բացթողումներին` ընդհանուր քննարկման արդյունքում սեմինարի մասնակիցները վստահորեն նշեցին որոշ առաջարկություններ մատուցվող ծառայությունների արդյունավետության և որակական կողմը ապահովելու համար, օրինակ`

- ծրագրի գնահատման լավ մշակված համակարգի ստեղծում,
- ծառայությունների մատուցման որակի ստանդարտների մշակում,

- տեղեկատվության և մարկետինգի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմների ներդրում և կիրառում:




## 2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ինքնագնահատման հարցաթերթիկների ամփոփման արդյունքում այս ոլորտը մասնակիցների կողմից նույնպես արժանացել էր ուշադրության՝ որպես առավել զարգացման կարիք ունեցող ոլորտ: Բոլոր մասնակիցները միաձայն կարևորեցին «մարդկային ռեսուրսներ» ոլորտի զարգացումը՝ որպես ՀԵԻԱ-ի կայունության հիմք: Այս ուղղությամբ քննարկման ընթացքում ներկաները առաջ քաշեցին հետևյալ առաջարկները՝

- ՀԵԻԱ-ի աշխատակիցների և կամավորների խրախուսման միջոցների ներդրում և կիրառում,
- աշխատանքի գնահատման թերթիկի մշակում և ներդրում,
- աշխատակազմի վերապատրաստման, որակավորման բարձրացման մեխանիզմների մշակում,
- որոշակի պարբերականությամբ ոչ ֆորմալ հավաքույթների կազմակերպում աշխատակազմի և շահակիցների ներգրավմամբ:




## 3. ՀԵԻԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Ինքնագնահատման հարցաթերթիկների վերլուծության ընթացքում պարզվեց, որ հարցաթերթիկներում ներառված հարցերի 9,17%-ին ինքնագնահատման մասնակիցները տեղյակ չէին: Ներքևում բերվում են ինքնագնահատման հարցաթերթիկներում տեղ գտած այն ոլորտները և առանձին ուղղությունները, որոնց մասին սեմինարի մասնակիցները ունեին լրացուցիչ տեղեկությունների կարիք:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսավորման աղբյուրները

- Կազմակերպությունը ունի ֆինանսավորման առնվազն 5 աղբյուրներ և դրանցից ոչ մեկի ներդրումը չի գերազանցում կազմակերպության ընդհանուր բյուջեի 40%-ը:
- Կազմակերպությունը ունի ծախքերի հատուցման մեխանիզմներ

ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Վարչության/Ղեկավարման կառուցվածքը

- Վարչության նիստերը տեղի են ունենում կանոնավոր կերպով: Նիստերի օրակարգերը և նիստերին վերաբերող նյութերը տարածվում են նախապես, գործում են քվեարկության ընթացակարգեր և կազմվում են նիստերի գրավոր արձանագրություններ:

ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեկտորային փորձաքննություն

- Շահառու խմբերի և շահակիցների լայն շրջանններ դիմում են կազմակերպությանը գործունեության տվյալ ոլորտում փորձագիտական կարծիք ստանալու համար:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Աշխատանքի ծավալի կառավարումը և թիմի ձևավորումը

- Կանոնավոր կերպով անց են կացվում աշխատակազմի ժողովներ:

Աշխատանքի ծավալի կառավարումը և թիմի ձևավորումը

- Աշխատանքային առաջադրանքները աշխատակիցների միջև բաժանվում են ըստ նրանց որակավորման և կատարված աշխատանքի ծավալի:

Աշխատանքային վեճերի կարգավորումը

- Աշխատանքային վեճերի և բախումների կարգավորման արարողակարգերը օգտագործվում են, երբ դրա կարիքը կա:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարդկային ռեսուրսների կառավարումը

- Կազմակերպությունը ունի գրավոր ձևակերպված կադրային քաղաքականություն և արարողակարգեր (հավաքագրում և վարձում, աշխատանքի որակի գնահատում, կարգապահական միջոցառումներ):
- Կազմակերպության բոլոր աշխատակիցների աշխատանքի որակի գնահատումը հանդիսանում է ստանդարտացված, սովորական արարողակարգ:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Համայնքային հարաբերությունները

- Կազմակերպությունը լայնորեն ճանաչված է համայնքի կողմից և ընկալվում է՝ որպես ակտիվորեն համայնքի գործերով զբաղվող և համայնքի խնդիրների շատ արագ արձագանքող կազմակերպություն:




I Ֆինանսական կայունություն
II Ղեկավարում
III Ծրագրեր և ծառայություններ
IV Մարդկային ռեսուրսներ
V Կառավարում
VI Հանրային հարաբերություններ

## V. ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Տվյալ հաշվետվությունը կտեղադրվի ՀԵԻԱ-ի վեբ կայքում և մատչելի կլինի կազմակերպության բոլոր անդամների համար:
ՀԵԻԱ-ի ինքնագնահատման մասնակիցները համաձայնեցին, որ սեմինարի ժամանակ ձևավորված աշխատանքային խմբերը կշարունակեն իրենց հետագա համատեղ աշխատանքը կազմակերպության զարգացման պլանի հստակեցման, կատարելագործման և անհրաժեշտության դեպքում ընդլայնման ուղղությամբ, կսահմանեն հանդիպումների պարբերականություն և կկատարեն դերերի և պարտականությունների վերջնական բաշխում:
Աշխատանքային խմբերի աշխատանքները կկոորդինացվեն և կվերահսկվեն աշխատանքային խմբերի ղեկավարների և կազմակերպության նախագահի կողմից:

### ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ռոբերտ Գրիգորյան- խմբի կոորդինատոր/համակարգող

7. Կարեն Զադոյան
8. Արտակ Սարիբեկյան
9. Մերի Եգանյան
10. Լյուդվիգ Դավթյան
11. Գայանե Մարուքյան
12. Գոռ Հովհաննիսայան

### ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լիանա Հարությունյան- խմբի կոորդինատոր/համակարգող

7. Միհրան Գալստյան
8. Էդուարդ Մանուկյան
9. Հեղինե Դանիելյան
10. Արփինե Եղիկյան
11. Արմինե Ավետիսյան
12. Հարություն Խառատյան